

Հակոբ Սեպեճյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՃՈՂ ՄՈՒԵԻՆԴԸ
Conium maculatum L.

Հին և նոր հայ դրականության մեջ *Conium maculatum*-ը կոչվում է մուխիսինդ, խնդակոք, խնդամուխ, կոնիոն, երբեմն շալխարան արարերեն բառը:

Մուխիսինդը հովանոցավորների ընտանիքին պատկանող մի երկամյա խոտաբույս է, ուղղաձիգ, 1—2 մետր բարձրությամբ, լերկ և սնամեջ ցողունով, փարթամ և բազմաճյուղ: Ցողունի վրա գոյանում են գինեգույն կարմիր բծեր, որոնք ավելի ակնհերև են լինում արևակողմը: Մուգ կանաչ տերևները ցողունի վրա հաջորդական են, խիստ կտրատված, սրածայր սեղձեմաններով: Ծաղիկները սպիտակ են, խմբված բարդ հովանոցներով, որոնց հիմքում գտնվում են դեպի ցած կախված կարճ, բարակ և եռանկյուն ծածկոց տերևիկներ: Պտուղը գնդաձև է, մի փոքր երկարավուն, կանաչորակ, իրար մոտեցող եղբերով, մոտավորապես 3 մմ. լայնությամբ, աջ ու ձախ դարձած երկու կախ կիսաերկր: Նրա լայնակի կտրվածքի վրա երևում են երկու խոռոչիկները, որոնց միջապատը որոշ չափով մղված է դեպի խոռոչիկները: Պտղի արտաքին մաշկը խորշ ու բորշ է, ավելի ճիշտ ատամնավոր և ալիքավոր:

Մուխիսինդն աճում է աղոտ և ստվերոտ հողերում, ինչպես Հայաստանում, նույնպես և երկրագնդի շատ վայրերում: Արմատը մեծ է, իլիկաձև, փափուկ և սպիտակ: Անփորձները շփոթում են նման արմատ ունեցող այլ բույսերի հետ, որը հաճախ թունավորման տեղիք է տալիս: Բույսի բոլոր մասերը թե թարմ և թե չորացած վիճակում ձեռքի մեջ շփելիս արձակում են անախորժ հոտ՝ նման մկնահոտի:

Մի շարք բույսեր բավականին նման են մուխիսինդին, կամ ըստ քիմիզմի և կամ մորֆոլոգիական տեսակետից: Քիմիզմի տեսակետից մուխիսինդին նման են մեզ մոտ և ուրիշ երկրներում աճող փոքր մուխիսինդը կամ շան մաղդանոսը *Aethusa cynapium*, ջրային մուխիսինդը *Cicuta Virosa*: Այդ երեք բույսերն էլ պարունակում են մոտավոր կազմ ունեցող մի հեղուկ յուղային ալկալոյիդ *Conicin* կամ *cicutin* 0,01—0,05 տոկոս: Մուխիսինդին մորֆոլոգիապես փոքր ի շատե նման են մի շարք ուտելի խոտաբույսեր, ինչպես օրինակ պարսիզի մաղդանոսը, այսինքն ուտսերեն պետրուզկան (*Petroselinium sativum*), շուշան բանջարը կամ կրոմանդակը *Chaerophyllum bulbosum*, որի ուտելի պալարամատը մեզ մոտ կոչվում է ադոլ կամ խնդուդ, խոխտուկը կամ իշուտուկը *Anthriscus nemeroso*: Կանգ չառնելով վերջիններիս տարբերիչ նկարագրության վրա, ասենք միայն, որ սրանք լրիվ կերպով նուսն են այն քիմիական, մորֆոլոգիական և օրգանոլեպտիկ հատկությունները, ինչ ունի *Conium maculatum*-ը:

Հետաքրքրական է նաև իմանալ, թե ինչ տվյալներ կան մեր պատմական գրականության մեջ այդ բույսի մասին: Մոլեխիսդի բուժիչ և թունավոր հատկության մասին երկար զրույց է XV դարի հայ բժշկագետ Ամիրզոյլաթը, նրանից հազար տարի առաջ այն մասին հիշատակում է Եզնիկ հայ փիլիսոփան, ցանկանալով ապացուցել, որ խիստ թունավոր բույսերն անգամ ունեն իրենց բուժիչ կողմերը: Նույն դարերի հայ մտավորականները լավ ճանաչում էին մոլեխիսդը, ինչպես, օրինակ, պատմագիր Մովսես Խորենացին, որը հիշատակում է Աթենքում Սոկրատես փիլիսոփայի թունավորման դեպքը: Հիշվում է նույնպես Ոսկեբրուցի Մեկնարանարքայն նույն դարու հայերեն թարգմանության մեջ:

* * *

Մեր ժողովուրդը գիմագոդ անվան տակ գործ է ածում մի ուտելի բույս, որը մեր համոզմունքով *Conium maculatum* է. բնականաբար բույսի լատիներեն անունը կարգացող անհեթեթ սխալ պիտի համարի ուտելի գինազողը լծորդել մի ստակալի թունավոր բույսի անվան հետ. բայց մենք համարձակվեցինք գինազողը որոշել այս լատին անվամբ 7 տարի շարունակ քննելուց և քննել առաջ հետո, բազմաթիվ անգամներ մենք ակնատես եղանք, թե ինչպես կանայք և երեխաները քաղում են գինազողը և ուտում. ինքս. նույնպես կերել եմ այդ «թունավոր» կոչված բույսը թե հում և թե թթու դրված վիճակում: Գերովականում, Լոռիում և Դիլիջանում հավաքել եմ այդ բույսի օրինակները և ստուգել տվել ընկ. ընկ. Ալ. Գ. Արարատյանին և Ա. Ա. Յոզորովին, որոնք վերջ է վերջո գտան, որ գինազող կոչված ուտելի բանջարը իսկապես *Conium maculatum* է: Գինազողի համը և հոտը մի քիչ տարբեր է *Conium*-ից և անախորժ չէ: Լեռնային Ղարաբաղում գործածվող գինազողը *Anthriscus* չէ, ինչպես կարծել է ընկ. Գևարովը (Этноботаника Горного Карабаха), այլ իսկապես *Conium maculatum* է, այս սխալի պատճառը պարզ է, նախ հեղինակը չէր կարող երկար տարիներ հետապնդել այս «չարաբաստիկ» խոտը, երկրորդ՝ գինազողը դեռ իր կատարյալ զարգացմանը չհասած չի կարելի տարբերել *Anthriscus nemerosa*-ից: Նույն սխալն է կատարել Գ. Գ. Յարոշենկոն, որը գինազողը *Anthriscus* անվան տակ ներկայացրել է Հ. Ս. Բուենիաթյանին վիտամիններ որոնելու նպատակով:

1941 թվին Մարտունի մեկնած մի էքսպեդիցիայի ժամանակ Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Հ. Գուլբանյանը և Բուսաբանական այգու գերեկատր Ե. Ս. Ղազարյանը խիստ հետաքրքրվել էին կոլխոպ շուկայում վաճառվող գինազողի գեղերով և փորձել էին ուտել գինազողի թթուն, հյուրընկալ մի տան մեջ, այն հարցմանը, թե «սա է իրոք գինազողը», նրանց հյուրասիրող անտեսուհին պատասխանում է զրահան կերպով և ուշադրությունները հրավիրում «զոզերի» վրա գտնվող կարմիր բծերի վրա:

Ցանկալի է, որ մեր նախնական տվյալներից հետո մեր բուսաբանները մանրակրկիտ կերպով քննեն այդ բույսի տարբերիչ նշանները և գուցե պարզվի, որ մեզ մոտ մոտ աճող *Conium*-ը նույնը չէ, ինչ որ հայտնի *Conium*-ն է և հարկ համարվի այն վերանվանել *Conium esculentum* (ուտելի մոլեխիսդ):

Մեզ հետաքրքիր է նաև այն հարցը, թե Հայաստանի գինազոդը չի պարունակում արդյոք Conicin կամ նմանօրինակ հերոյիկ ալկալոյիդներ, թեև ուզ շատ չնչին տոկոս: Մենք այս փորձերը կատարել ենք մոտավորապես 100 գրամ կանաչ մասի վրա և ոչ մի կաթիլ ալկալոյիդ չենք նկատել, բայց տաս գրամ պտուղների (սերմերի) փորձարկման ժամանակ տեսել ենք մի փոքր պղտորություն և զգացել ենք մի ինչ որ անախորժ եթերային հոտ: Դիտողությունները ցույց են տալիս, որ գինազոդ ուտողները, առանձնապես շատ կուշտ ուտողները, զգում են իրենց մեջ մի ինչ որ անհանդատություն: Մարտունիում էքսպեկտիցիայի հյուսվածքային ալոպիսի մի հարցի պատասխանել է, որ գինազոդ շատ ուտողները խոր քուն են մտնում: Մի բասենցի մեծահասակ կին մեզ պատմել է, որ իրենց այդ բանջարիցի դիտել են ասում, որը ոչ հում վիճակում և ոչ էլ թթու դրած ուտելիս չեն եղել, որովհետև մարդու շմեցնում է, բայց եփելուց և ջուրը մղելուց հետո գործ են ածել, որպես ախորժելի կերակուր: Սովետական Աղբբեջանի հայերը սովոր չեն ուտել գինազոդը, այնտեղ նրան անվանում են զիզանաղ, որ նշանակում է գժվեցնող:

Գիսագող բառի ստուգադարանությունը նույնպես զուրկ չէ հետաքրքրությունից. ծիր մարդիկ պատմում են, որ որոշ մարդիկ Լոռիում առանց գինազոդի թթուի գինի չեն խմել: Հետաքրքրական է նույնպես մեր Մատենադարանի 2594 համարի տակ գտնվող XVII դարում գրված մի ձեռագիր, որի Շավքարան (Մոլիխինգ) հատվածում կարգում ենք հետևյալ տողերը. «Շավքարանը թունաւոր է... շատ գինի խմողներուն կօզտէ»:

Եվս մի հարց, արդյոք մի այլ երկրում նկատվել է Conium-ի կիրառումը, ոչ իբրև դեղ, այլ ուտելի կամ անվնաս բույս, այս հարցը քննելու համար հարկ եղավ փնտրումներ կատարել հին և նոր գրքերի մեջ և մեզ հաջողվեց գտնել որոշ ապացույցներ, որից հետո այլևս չի կարելի պնդել, թե անթույն Conium maculatum զուտ Հայաստանի էկոլոգիական պայմանների ստեղծումն է. ձեռքի տակ կան երկու տպագիր ֆրագմենտներ, որոնք բավականին փաստ են ներկայացնում հարցի լուսաբանման համար: Ֆրանսիացի երկու պրոֆեսորներ՝ A. Rolet et D. Bouret երկասիրած «Բժշկական բույսեր» գրքի Conium-ի հատվածում ի միջի այլոց գրում են հետևյալը. «Conium maculatum-ը, երբ աճում է հարավային երկրներում, ավելի թունավոր է քան այնպիսիք, որոնք աճում են հյուսիսում, ասում են նույնպես Շոտլանդիայում աճող բոլորովին թույն չունի և բնակիչները ուտում են որպես սալատ» և ավելացնում են «և սակայն այս հայտարարությունը կարոտ է ստուգման»: Այժմ վստահ կարելի է ասել, որ այս հարցը այլևս կարոտ չի ստուգման, քանի որ այդ բույսը անկասկածելի կերպով որպես ուտելի բույս գործ է ածվում Սովետական Հայաստանի լեռնային շրջանների բնակչության կողմից: Այլևս առասպել չպետք է համարենք մի հին գրվածք ևս Conium-ի սննդանյութ լինելու մասին, որը Դ. Ալիշահը իր «Հայ Բուսակ» գրքի «Մոլիխինգ» հատվածի վերջում նշում է, թե XII դարի իտալացի տեղեկագիր Հովսեփ Բարբարո* կուտան, որ

* Յովսեփ Բարբարո—հենց ինքն Josapha + Barbaro-ն է, ծնունդ է 1436—1494 թվականում Արևելքում, որպես հյուպատոս Վենետիկի անպարբերկայի, գտնվել է Պարսկաստանում, Հնդկաստանում, Կ. Պոլսում և ավելի շատ Արև-Տանիայում (Աղով): Զննադարհորդու-
Бюллетень 6—5

թափառկոտ Թաթարները այս խոտս կուտեին, եթե չուտեին, անթուլեթենն կը մեռնեին:

Մեր այս ուսումնասիրությունից պարզվում է, որ գինազողը կարող է ունենալ արտադրական նշանակություն, նախ Հայաստանի գինազողը պիտի ընդունել որպես սննդանյութ, և ինչպես հաստատել է Հ. Ս. Բու-նիաթյանը, հարուստ վիտամինով. երկրորդ, Conium ի ներքին (ուտելով) կիրառումը տերապևտիկայում, զանազան դեղագործական գալենիկ ձևերով (pulvis tinctura extractum և այլն), որը այդ հերոյիկ բույսից զգուշ մնալու պատճառով կանգ է առել XX դարում, կարելի էլինի վերականգնել հայկական Conium-ի շնորհիվ, գործածելով այն ինտեգրալ վիճակով (բոլոր մասերը միասեղ վերցրած), նման միջոցառումները կարող է համընկնել կլասիկ բժշկության քոլյաները կամ սուլֆիմները քեքևացմամբ կիրառելու մեթոդի հետ, և ինչպես երևում է վերևում բերված մանրամասնություններից, մեր Conium-ը բացարձակորեն զուրկ չէ՝ ակտիվ նյութերից:

Ինչ վերաբերում է գինազողի թթվի գործածությանը, ապա պետք է զգուշացնել, որ նրանք, որոնք իրենց ծննդավայրում գործ են անել գինազողը, մի այլ տեղ փոխադրվելիս չպետք է ձեռք տան այդ նոր ընակավայրի գինազողին, առանց հաստատապես իմանալու տեղական ընակիչներից, որ այն կարելի է ուտել:

Акоп Сепетчян

О произрастающем в Армении болиголове Conium maculatum L.

Резюме

В некоторых районах Армении местным населением, в числе многих дикорастущих растений, употребляется как овощ также растение из сем. зонтичных, под названием *гиназох*. При идентификации оказалось, что мы имеем дело с болиголовом—*Conium maculatum* L., считавшимся весьма ядовитым растением. Об этом растении пишут древние армянские историки и врачи: Возник в V веке, Амирдовлат в XV веке и другие. Они находят его ядовитым, но принимают также, что болиголов может быть использован во врачебных целях. В литературе приводится факт об использовании болиголова в пищу в Шотландии.

Наши анализы показали, что в траве местного болиголова нет алкалоидов, а в семенах—незначительное количество (легкое помутнение в пробирке).

Թյան մասին գրել է Անտոնին Մանուցյան, տիպ. Վենետիկ 1513 թ.—լրիվ ուսումնասիրությունը կոտարի է Բ. Սեճյանով. տես, Библиотека иностранных писателей о России, СПб, 1836 г.